# Ընտրվել են ԳԱԱ-ի 4 կազմակերպությունների տնօրեններ

Երեկ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում տեղի է ունեցել ԳԱԱ-ի 4 կազմակերպությունների տնօրենների ընտրություններ:

Ըստ ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոնի, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր **Արամ Պապոյանը**: ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվել է ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու **Վլադիմիր Սահակյանը**: ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու **Արսեն Հախումյանը**: ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում 9 կողմ, 2 դեմ եւ 1 անվավեր ձայների հարաբերակցությամբ վերընտրվել է երկր. գիտ. դոկտոր **Արկադի Կարախանյանը**: